

ՓՄՁ սուբյեկտների կապիտալի ֆինանսավորման ծրագիր

Կապիտալի ֆինանսավորման ցանկացած մեխանիզմ հնարավորություն է ընձեռում տնտեսավարող սուբյեկտներին խոշոր գործարար նախագծեր իրագործելու և կառավարելու նպատակով ներգրավել կապիտալ միջոցներ:

Գործող ՓՄՁ սուբյեկտների կապիտալի ֆինանսավորման ծրագրի շրջանակներում նախատեսվում է գործող ՓՄՁ սուբյեկտների կապիտալի որոշակի բաժնեմասի կամ փայամասնակցության ձեռքբերում (նոր արտադրական հզորությունների կամ նոր արտադրական ուղղությունների զարգացման ֆինանսավորման նպատակով):

ՓՄՁ սուբյեկտների կապիտալի ֆինանսավորման ծրագրի շրջանակներում ՓՄՁ սուբյեկտների կապիտալում ներդրումները նախատեսվում է իրականացնել Արցախի ներդրումային հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից հավանության արժանացած և կոնկրետ գործարար նախագծի իրագործման համար անհրաժեշտ գումարների սահմաններում: Սույն ծրագրի շրջանակներում բաժնեմասերում ներդրումները կամ փայամասնակցության ձեռքբերումը չի ենթադրում փոխառու միջոցների տրամադրում, այլ հիմնվում է բաժնեմասի հաշվեկշռային կամ շուկայական գնի աճի և ձեռնարկատիրական շահույթից ակնկալվող շահութաբաժնի սկզբունքի վրա:

ՓՄՁ սուբյեկտների կապիտալի ֆինանսավորման ծրագրի մեկնարկից հետո 3-5 տարվա ընթացքում նախատեսվում է բաժնեմասի վաճառք ուղղակի հրապարակային առաջարկի սկզբունքով: